

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՎԵՃՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼԵԶՎՈՎ

Մաս առաջին: Միջպետական սահմանի հարցը 1918 թ.
հունիս-հուլիսին*

1917 թ. Փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ամիսներին, երբ Ռուսաստանում փլուզվում էր միապետական վարչակարգից ժառանգություն մնացած կառավարման համակարգը, հայության շրջանում հույսեր արթնացան, որ լուծում կգտնի նաև Անդրկովկասն ազգային հիմքի վրա վերաբաժանման ենթարկելու առաջադրանքը:

Ցարական Ռուսաստանն իր տիրապետության տակ գտնվող երկրամասի վարչատարածքային բաժանումներն իրականացրել էր այն սկզբունքով, որ առանձին նահանգներում և մարզերում բնակվող ժողովուրդներից որևէ մեկը բացարձակ մեծամասնություն չկազմի: Դա արվում էր նրանց միմյանց դեմ լարելու, ազգային տարածքներ ստեղծելու հավակնությունները կանխելու և սեփական տիրապետությունը հաստատուն պահելու նպատակով:

Անդրկովկասի վարչական վերաբաժանման խնդիրը հետապնդելու հարցում առանձնակի ակտիվություն էր դրսևորում հայության առաջատար ուժը՝ **ՀՅ Գաշնակցությունը**, որի ներկայացուցիչներ Ավետիս Շահխաթունին և Գևորգ Խատիսյանը 1917 թ. հուլիսին Պետրոգրադում մասնակցեցին ներքին գործերի նախարարության տեղական ինքնավարությունների հանձնախմբի հրավիրած խորհրդակցությանը: Նրանց հաջողվեց խորհրդակցության մասնակիցներին համոզել զենստվոններ (տեղական ինքնավարության մարմիններ) մտցնելուց առաջ երկրամասը ենթարկել վարչական վերաբաժանման, որով ստեղծվելու էին երեք հայկական նահանգներ՝ Գանձակի, Ալեքսանդրապոլի և Երևանի, ուր հայերը կազմելու էին համապատասխանաբար՝ 70, 66 և 54 տոկոս:

Այդ առաջարկը գիտականորեն հիմնավորած Ա. Շահխաթունու կազմած մանրամասն նախագծով՝ **Գանձակի նահանգը** ստեղծվելու էր Ելիզավետպոլի նահանգը հայկական և թաթարական մասերի բաժանելու արդյունքում: Առաջինի մեջ էին մտնելու հետևյալ գավառները՝ Քարվանսարայի (բաղկացած Ղազախի գավառի լեռնային հայաբնակ մասերից), Գանձակի (կազմված Ելիզավետպոլի գավառի լեռնային հայաբնակ հատվածից), Շուշիի (ընդգրկելով Շուշիի գավառի գերակշիռ մասը, Ջևանշիրի

*Ընդունվել է տպագրության 19.11.2012:

գավառի լեռնային հայաբնակ մասերը, Զանգեզուրի գավառի որոշ գյուղախմբեր և Կարյագինոյի գավառի Հադրութի, Էդիլլուի և Առաքյուլի գյուղախմբերը), Զանգեզուրի (բաղկացած Զանգեզուրի գավառի մնացած մասից՝ առանց Բարկուշատի հովտի թաթարաբնակ մի քանի գյուղախմբերի): Նահանգի կենտրոնն էր լինելու Ելիզավետպոլ քաղաքի հայկական մասը:

Ալեքսանդրապոլի նահանգը բաղկացած էր լինելու Ալեքսանդրապոլի (կազմված Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի գերակշիռ մասից և Էջմիածնի գավառի մի մասից), Ախալքալաքի (ընդգրկելով Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառը և Ծալկայի մի քանի հայկական գյուղախմբեր), Լոռու (բաղկացած Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Լոռու տեղամասից, Բորչալուի ու Եկատերինենֆելդի տեղամասերի որոշ տարածքներից, ինչպես նաև Ալեքսանդրապոլի գավառի մի հատվածից), Կարսի մարզից առանձնացվելիք Կարսի ու Կաղզվանի գավառներից (մարզի առավելապես մահմեդականներով բնակեցված մյուս երկու գավառները՝ Արդահանը և Օլթին, միացվելու էին Բաթումի մարզին կամ Ալեքսանդրապոլի նահանգին): Բացի Ալեքսանդրապոլի գավառից և Էջմիածնի գավառի մի մասից, որոնք պետք է միացվեին նորաստեղծ Ալեքսանդրապոլի նահանգին, **Երևանի նահանգը** պահպանելու էր իր նախկին տարածքները¹:

Անդրկովկասի վարչատարածքային վերաբաժանման ՀՅ Դաշնակցության առաջարկը հանդիպեց կովկասյան թաթարների անմիջական և վրացիների փաստացի հակազդեցությանը, քանի որ վերջիններիս բավարարում էր եղած իրավիճակը: Հակառակ պարագայում նրանք կգրկվեին մի շարք տարածքներից, ուր հայերը մեծամասնություն էին կազմում: Ժամանակավոր կառավարության անկման հետևանքով Անդրկովկասի վարչական վերաբաժանման հարցը մնաց առկախ, իսկ 1918 թ. մայիսին Անդրկովկասի Դաշնային Հանրապետության փլուզումից և երեք անկախ պետությունների ստեղծումից հետո արտաքին կողմնորոշման և տնտեսական խնդիրների կողքին տարածքային հարցը դարձավ հայերին, վրացիներին ու կովկասյան թաթարներին տարանջատող և հակասություններ առաջ բերող գլխավոր խնդիրը²:

1918 թ. հունիսի 4-ին Օսմանյան կայսրությունը Բաթումում հաշտության պայմանագրեր ստորագրեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ, որով Հայաստանի Հանրապետությանն էր թողնվում Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառը և տարածքներ Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Երևանի և Շարուր-Դարալագյազի գավառներից: Օսմանյան կայսրության և Վրացական Հանրապետության միջև կնքված պայմանագրով վերջինս ևս որոշակի տարածքային գիջումներ կատարեց թուրքերին, որոնք փորձում էին ամեն գնով կայսրությանը բռնակցել Ախալքալաքի և Ախալցխայի գավառները՝ ցանկանալով ձանապարհ բացել դեպի Գան-

1 Տե՛ս **Шахатуриян А.**, Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 128-134: Տե՛ս նաև՝ **Աբեղեան Արտ.**, Մենք և մեր հարևանները (Ազգային քաղաքականության խնդիրներ), «Հայրենիք» ամսագիր, Պոսթրին, 1928, N 4, փետրուար, էջ 96-98, **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 23-24:

2 Տե՛ս **Սուրիապյան Հ. Կ.**, Հայ-ադրբեջանական տարածքային խնդիրների լուսաբանումը Ռուբեն Տեր-Մինասյանի աշխատություններում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2008, N 1, էջ 186-187:

ձակ: Սակայն, գերմանացիների օժանդակության շնորհիվ, վրացիներին հաջողվեց Ախալցխայի գավառից իրենց պահել Աբասթումանը և Ածղուրին³: Իսկ Օսմանյան կայսրության և Ադրբեջանական Հանրապետության միջև կնքված պայմանագիրը, հայտնի պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի միանգամայն ճշգրիտ բնորոշմամբ՝ «ավելի շատ դաշինքի բնույթ ուներ»⁴:

Անդրկովկասյան երեք անկախ հանրապետությունների ստեղծումից հետո Անդրկովկասի վարչատարածքային վերաբաժանման շուրջն ընթացող քննարկումները վերաճեցին միջպետական տարածքային վեճերի և հակամարտությունների: Ուստի սահմանավեճերը դարձան նորանկախ հանրապետությունների միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու փորձաքարը:

Հայոթյան քաղաքական ղեկավարությունը ստանձնած ՀՅ Դաշնակցությունը Հայաստանի անկախության հռչակումից հետո նույնպես շարունակում էր հանդես գալ 1917 թ. առաջ քաշված անդրկովկասյան պետությունների սահմանագծման ազգագրական և պատմական սկզբունքներով: Բաթումում թուրքերի հետ հաշտության պայմանագիր կնքելուց հետո նորանկախ պետության բարձրագույն իշխանությունը հանդիսացող Հայոց ազգային խորհուրդը, որը դեռևս գտնվում էր Թիֆլիսում, ձեռնամուխ եղավ Վրաստանի և Ադրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության միջպետական սահմանների որոշմանը:

Հայաստանի և Վրաստանի միջև սահմանագատմանը խոչընդոտող գլխավոր հարցը պատմականորեն հայկական և հայաբնակ Ախալքալաքի գավառի և Բորչալուի գավառի հարավային մասի՝ Լոռու պատկանելության հարցն էր: Այս տարածքները հնագույն ժամանակներից հայկական հաջորդական թագավորությունների մասերն էին կազմել, սակայն դրանց անկումից հետո՝ ավելի ուշ, անցել էին Բագրատունիների Վրացական թագավորությանը՝ վերջինիս կազմում միացվելով Ռուսաստանյան կայսրությանը: Սրա վրա էին խարսխվում վրացիների «փաստարկները»՝ այն պարագայում, երբ, օրինակ, 1916 թ. «Կովկասյան օրացույցի» համաձայն՝ Ախալքալաքի գավառի 106.345 բնակիչներից ռուսները կազմում էին՝ 7.225, վրացիները՝ 7.219, հայերը՝ 81.993, սունի մահմեդականները՝ 8.943, Բորչալուի 178.563 բնակիչներից ռուսները կազմում էին՝ 1.198, վրացիները՝ 2.800, հայերը՝ 76.247, շիա և սունի մահմեդականները՝ 54.594⁵: Վիճելի համարվող գավառներում հայ բնակչությունն այնքան գերակշիռ քանակ էր կազմում, որ վրացական իշխանություններն իրենք նույնպես ընդունում էին նշված տարածքներում վրացիների փոքրաթիվ լինելու փաստը:

Ավելին, նախնական հանգրվանում՝ 1917 թվականին, վրաց մենշևիկների առաջնորդներ Նոյ Ժորդանիան, Նոյ Ռամիշվիլին և նրանց համախոհները բազմիցս հայտարարել էին, որ իրենք ընդունում են Ախալքալաքն ու Բորչալուի հայկական մասը հայկական նահանգների մեջ

3 Տե՛ս **Աւարով Զ.**, Վրաստանի անկախութիւնը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1935, N 5, մարտ, էջ 62:

4 **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հտ. I. Առաջին Տարին, 1918-1919, Եր., 2005, էջ 39:

5 Տե՛ս “Кавказский календарь на 1916г.” Под ред. **Н. П. Стельмашука**, Тифлис, 1915, էջ. 42-45:

ներառելու իրավունքը: Այդ պատճառով էլ Փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ամիսներին այս շրջանները փաստացի ենթարկվում էին ոչ թե Վրաց, այլ Հայոց ազգային խորհրդին⁶: 1918 թ. թուրքական արշավանքի ժամանակ Հայոց ազգային խորհուրդը ջանք ու եռանդ չէր խնայում նշված շրջանները պաշտպանելու համար, իսկ Վրաց ազգային խորհուրդն այդ հարցում անտարբեր էր:

Դեռևս Բաթումի բանակցությունների ընթացքում թուրքական կողմն իր միջնորդությունն առաջարկեց Հայաստանի և Վրաստանի սահմանների որոշման համար: Ժամանակի հայ գործիչներից ոմանք այն կարծիքին էին, որ պետք է օգտվել թուրքերի ցանկությունից՝ վրացիների հաշվին ընդլայնելու Հայաստանի տարածքը: Այնուհանդերձ, թուրքական միջնորդությունը վտանգավոր համարվեց: Բացի այդ, դրան դեմ արտահայտվեցին վրացիները՝ չցանկանալով Անդրկովկասի հանրապետությունների և Օսմանյան կայսրության միջև կնքվող պայմանագրերում վերջնականապես որոշել ներանդրկովկասյան սահմանները⁷: Նրանք հույս ունեին, որ, օգտագործելով հայերի և ադրբեջանցիների միջև եղած հակասությունները, ինչպես նաև հենվելով գերմանական աջակցության վրա, կհասնեն իրենց համար առավել նպաստավոր սահմանների որոշմանը: Ահա այս նպատակով 1918 թ. հունիսի 2-ին Վրաստանի նորաստեղծ կառավարությունը հայտարարեց, թե Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանների որոշումը պետք է կատարվի բացառապես նշյալ պետությունների կողմից: Հակառակ դեպքում վրացիները սպառնում էին ոչ մի դեպքում իրենց համար «ընդունելի և պարտադիր» չհամարել Օսմանյան կայսրության և Ադրբեջանի ու Հայաստանի կամ նրանցից որևէ մեկի միջև կնքված պայմանագրերը⁸:

1918 թ. հունիսի սկզբին Հայաստանի և Վրաստանի սահմանների ճշգրտման նպատակով բանակցություններ սկսվեցին Հայոց և Վրաց ազգային խորհուրդների միջև: Երբ Թիֆլիսին սպառնացող թուրքական վտանգը կանխելու պատճառաբանությամբ 1918 թ. հունիսի սկզբին վրաց-գերմանական զինված ուժերը գրավեցին Բորչալուի գավառի հյուսիսային մասը (հարավային մասը ռազմակալված էր թուրքական զորքերի կողմից), Վրաց ազգային խորհրդի նախագահ Նոյ ժորդանիան և Վրաստանի վարչապետ Նոյ Ռամիշվիլին հունիսի 10-ին այցելեցին Հայոց ազգային խորհրդի կենտրոնատեղին և Ավետիս Ահարոնյանին, Հովհաննես Քաջազնունուն ու Ալեքսանդր Խատիսյանին վստահեցրին, թե իբր՝ այդ գրավումը ժամանակավոր է, ուստի թուրքական վտանգն անցնելուց հետո վրացական զորքերը կհեռանան: Նրանք առաջարկեցին նաև էթնիկական (ազգային) սկզբունքով Բորչալուն բաժանել երկու պետությունների միջև: Ախալքալաքի հարցը չէր քննարկվում, քանի որ այն գրավված էր թուրքական զորքերի կողմից:

6 Տե՛ս **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է, Թեհրան, 1982, էջ 135:

7 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ **Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազարյանի**, Եր., 2000, էջ 43-44, **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրուօ, 1968, էջ 92:

8 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 11 և շրջ.: Նաև՝ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 366.

Հաջորդ օրը՝ հունիսի 11-ին, Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Խաչատուր Կարձիկյանը, Գևորգ Խատիսյանը և գեներալ Գաբրիել Ղորղանյանը ներկա գտնվեցին Վրաստանի կառավարության կազմած պետական սահմանները որոշող հանձնաժողովի նիստին: Նիստի ընթացքում հանձնաժողովի ղեկավար Իրակլի Ծերեթելին Վրաց ազգային խորհրդի անունից հայտարարեց, թե Վրաստանի կազմի մեջ պետք է մտնեն Ախալքալաքի, Բորչալուի, Ղազախի գավառները և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասը՝ պատճառաբանելով, որ հայերով բնակեցված տարածքները Վրաստանի կազմի մեջ մտցնելը բխում է ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի շահերից: Հայ գործիչների համար անակնկալ նման հայտարարությունը հակասում էր վրացի մենշևիկ առաջնորդների նախորդ տեսակետներին: Առավել զարմանալի թվաց Ի. Ծերեթելիի այն հիմնավորումը, որ Բաթումի պայմանագրի ստորագրումից հետո հայերը չեն կարող կենսունակ պետություն ստեղծել, ուստիև գերմանացիների աջակցությամբ ձևավորվող հզոր քրիստոնյա Վրաստանը կպաշտպանի նաև հայերին: Այդ պատճառով ինչքան շատ հայկական տարածքներ մտցվեն վրացական պետության կազմի մեջ, այնքան շատ հայեր ապահով կլինեն: Սրան Խ. Կարձիկյանը պատասխանեց, թե այդ առաջարկը ոչ այլ ինչ է, քան Հայաստանը Վրաստանի, Ադրբեյջանի և Թուրքիայի միջև բաժանելու հին ծրագրի կենսագործման փորձ⁹: Չի բացառվում, որ այստեղ Խ. Կարձիկյանը նկատի ուներ դեռևս 1914 թ. «Վրաստանի ազատագրման կոմիտե» կազմակերպության և օսմանյան կառավարության միջև կնքված գաղտնի համաձայնագիրը, որով նախատեսվում էր թուրքերի օգնությամբ վերականգնել Վրաստանի անկախությունը՝ հայկական տարածքների հաշվին ընդլայնելով նրա սահմանները¹⁰:

Խ. Կարձիկյանի առարկության արդյունքում Ի. Ծերեթելու առաջարկով որոշվեց ընդմիջել նիստը և հարցը վերաքննելուց հետո հանդես գալ միայնակ համար առավել ընդունելի, փոխգիշումային առաջարկներով: Սակայն մի քանի օր անց վրացական թերթերում հրապարակվեց Վրաստանի կառավարության որոշումը պետության սահմանների մասին, որոնց մեջ մտցվել էին նաև Բորչալուն և Ախալքալաքը, իսկ վրացիների պահանջած Ղազախի և Փամբակի բացակայությունը Վրաստանում ՀՀ լիազոր ներկայացուցիչ Արշակ Զամայանը հետագայում բացատրում էր նրանով, որ այդ շրջանների հարցը վրացիները բարձրացրել էին «միայն առևտուրի»¹¹ համար:

Հայոց ազգային խորհուրդը բողոքեց վրացիների այս քայլի դեմ, սակայն բողոքը դրական արդյունք չունեցավ, այլ միայն հարուցեց վերջիններիս պահանջը՝ հայկական իշխանության մարմինները հեռացնել Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսից: Վրացական իշխանությունները նույնիսկ չձանապարհեցին հուլիսի 17-ին Թիֆլիսից Երևան մեկնող Հայոց

9 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 15 և շրջ., ֆ. 223, ց. 1, գ. 61, թ. 5 և շրջ.: «Հորիզոն», 18 հունիսի 1918 թ., N 117; **Զամայան Ա.**, Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1928, N 6, ապրիլ, էջ 90-91:

10 Տե՛ս **Յակարյան Ա.**, Малоизвестный исторический документ (грузино-турецкое соглашения 1914 г.), «Историко-филологический журнал», 2005, N 3, с. 255-257.

11 **Զամայան Ա.**, նշվ. աշխ., էջ 91:

ազգային խորհրդին ու Հ. Քաջազնունու գլխավորած կառավարությանը: Այդուհանդերձ, հայկական իշխանության մարմինների մեկնումից հետո երկու պետությունների միջև գոյություն ունեցող սառնությունն ու փոխադարձ մեղադրանքները որոշակի կերպով դադարեցին մինչև 1918 թ. հոկտեմբեր ամիսը, որը հիմնականում պայմանավորված էր վիճելի համարվող Ախալքալաքի և Բորչալուի հարավային մասի՝ թուրքերի կողմից ռազմակալված մնալով:

Հայ-վրացական տարածքային հակամարտության հաջորդ փուլը սկսվեց բուլղարական և սիրիական ճակատներում Օսմանյան կայսրության պարտությանը և թուրքական զորքերի կողմից Լոռին և Փամբակը դատարկելուն հաջորդած իրադարձություններով:

Ուստի Անդրկովկասի Դաշնային Հանրապետության փլուզումից մինչև Թիֆլիսից Հայոց ազգային խորհրդի և ՀՀ կառավարության Երևան մեկնելը կարելի է պայմանականորեն համարել հայ-վրացական միջպետական տարածքային վեճերի **սկզբնավորման շրջան**: Ստորև ներկայացվող փաստաթղթերը վերաբերում են հենց այդ հանգրվանին՝ ժամանակագրական տեսակետից ընդգրկելով 1918 թ. հունիս-հուլիս ամիսները: Դրանք լրացնում և ամբողջացնում են մեր կազմած «**Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս)**»¹² ժողովածուի մեջ հրապարակված վավերագրերը՝ ստեղծելով կայուն հիմք հիմնահարցի ամբողջական ուսումնասիրության համար: Փաստաթղթերն ընտրված են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) N 200, 201, 222 և 245 ֆոնդերից, իսկ որոշ կարևոր նյութեր՝ ժամանակի պարբերական մամուլից («Հորիզոն», «Մշակ», «Աշխատավոր»):

Հրապարակվող փաստաթղթերի իմաստային և լեզվաոճական առանձնահատկությունները պահպանվել են իրենց բնագրային տեսքով, կատարվել են միայն ուղղագրական և կետադրական շտկումներ, ռուսերենով տեքստերը մեր կողմից թարգմանվել են հայերենի՝ հավելելով անհրաժեշտ ծանոթագրություններով: Տեքստի մեջ մեր կողմից կատարված լրացումներն ու հավելումները բերված են ուղղանկյուն փակագծերում ([]), իսկ հրապարակման թեմատիկային չառնչվող և դուրս թողնված հատվածները ցույց են տրվում սուրանկյուն փակագծերի մեջ կախման կետեր դնելով (<...>):

Համո Կ. Սուքիասյան
Պատմ. գիտ. թեկնածու

ARMENIAN-GEORGIAN BOUNDARY DISPUTE IN DOCUMENT LANGUAGE

Part one. The question of interstate boundary in June–July 1918

Hamo K. Sukiasyan

12 Տե՛ս «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս)»: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, Եր., 2009:

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

Դ (Ժ) ԳՐԱԹԻ, ԹԻՎ 4 (40) ԽՈՒԿՆԵՐԵՐ-ՊԵՆԿՆԵՐԵՐ, 2012

ՎԻՄ համահայկական հանդես

N 1
**Հայկական հաշտարար
պատվիրակության ղեկավար
Ալեքսանդր Խատիսյանի
նամակը Հայոց ազգային խորհրդի
նախագահ Ավետիս Ահարոնյանին**

3 հունիսի 1918 թ.
ք. Բաթում

Թանկագին Ավետիս: Ցրիչն ուշացավ ճանապարհվել, այդ պատճառով ավելացնում եմ հետևյալը. [ամսի] 2-3-ի գիշերը վրացիները ստորագրեցին պայմանագիրը¹³: Նրանց կատարվել է հետևյալ տարածքային զիջումը. Ախալցխայի գավառից նրանց տրվել է հյուսիսային մասը՝ ներառելով Ջեկարը, լեռնանցքը, Աբասթումանը և Ացղուրը: <...>

Այնուհետև մենք իմացանք, որ անդրկովկասյան հանրապետությունների (Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի) ներսում սահմանաբաժանմանը Թուրքիան չի միջամտել և այդ պատճառով մեր սահմանների հարցը դեռևս բաց է մնացել: Սակայն մենք գիտենք, որ վրացիները հայտարարել են, որ ամբողջ Բորչալուի գավառն իրենցն է: Մենք, թուրքերը և թաթարները Բորչալուի գավառի հարավային մասը՝ Ագրիկալ լեռ-Շուլավեր-Ղամարլու¹⁴ գծով, մերն ենք համարում:

Այդ պատճառով անմիջապես քայլեր ձեռնարկեք փաստացի գրավելու այդ գիծը (թաթարների հետ համաձայնեցված), որպեսզի հետո ուշ չլինի:

Այդ իմաստով ազդեք Շուլավերի վրա, այլապես շուլավերցիների մոտ հակում կա դեպի Թիֆլիսը: Զարմանում եմ, որ, չնայած ձեր խոստմանը, մեր սահմանաբաժանման համաձայն Բորչալուի գավառի սահմանների մասին Դուք հեռագիր չեք ուղարկել: Մեզ այդ անհրաժեշտ է, անհապաղ կատարեք: Վաղը կստորագրենք <պայմանագրի> աշխատանքային օրինակը, հավանաբար կմեկնենք [ամսի] 5-ին կամ 4-ի գիշերը: <...>

13 Խոսքը թուրք-վրացական պայմանագրի մասին է:

14 Գյուղ Թիֆլիսի սահանգի Բորչալուի գավառում:

15 Ընդգծումը փաստաթղթինն է:

16 Ստորագրությունն անընթեռնելի է:

17 Փաստաթղթի լրագրային տարբերակը տես «Հորիզոն», 6 հունիսի 1918 թ., «Աշխատավոր», 6 հունիսի 1918 թ., «Մշակ», 6 հունիսի 1918 թ.:

**ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 59:
Ինքնագիր: Թարգմանություն
ռուսերենից:**

N 2
**Վրաստանի կառավարության
գրությունը Հայոց ազգային խորհրդին**
3 հունիսի 1918 թ.

Վրացական Հանրապետության կառավարությունն այս՝ 1918 թ. հունիսի 2-ի իր նիստում ո ռ ո շ ե ց¹⁵. Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանների ուղղումն ու հաստատումը կազմում է նշված երկրների կառավարությունների բացառիկ իրավասությունը, որ Վրացական Հանրապետության կառավարությունն Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների հետ նշված հարցի շուրջ անմիջական բանակցություններ կարող է վարել Թիֆլիս քաղաքում առանց Թուրքիայի միջամտության: Այն դեպքում, երբ պարզվի մի կողմից Օսմանյան կայսրության, մյուս կողմից Ադրբեջանի և Հայաստանի կամ նրանցից մեկի միջև այս իրողության վերաբերյալ պայմանագիր կնքված լինելը, այդպիսի պայմանագիրը Վրացական Հանրապետության կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող իր համար ընդունելի և պարտադիր ճանաչել:

Պատիվ ունեմ վերոշարադրյալի մասին տեղեկացնելու Ձեզ:

Կառավարության նախագահի
պարտականությունները
կատարող, ռազմական նախարար՝ Գ.
Գեորգաձե
Կառավարության գործերի
կառավարիչ¹⁶

**ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 11 և շրջ.:
Բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն
ռուսերենից¹⁷:**

Հայկական հաշտարար պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Խատիսյանի նամակը Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանին

4 հունիսի 1918 թ.
ք. Բաթում

Թանկագին Ավետիս: Վերջնականապես պարզվեց, որ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև սահմանաբաժանման հարցը լուծվելու է ոչ թե այստեղ¹⁸, այլ Թիֆլիսում: Ըստ պայմանագրի՝ Թուրքիան մեկ ընդհանուր սահման է մտցրել իր և երեք պետությունների¹⁹ միջև, իսկ այդ պետությունները պետք է իրար միջև սահմանագծվեն Թիֆլիսում: Նկատի ունենալով այդ, ինչպես նաև այն, որ մեզ անհրաժեշտ է Բորչալուի գավառում Վրաստանի հետ [սահմանային] գիծ ունենալ Ագրիկալա-Շուլավերից ոչ ներքև և [Ադրբեջանի հետ] Շարուրում Արփա գյուղից: Գլխավորը [սշված սահմանագիծն] անհապաղ փաստացի զբաղեցնելն է: <...>

**ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 62:
Ինքնագիր: Թարգմանություն
ռուսերենից:**

Փաստաթղթի պատճենի հիման վրա (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 79) այս վավերագիրը մասնակիորեն հրատարակվել է Խ. Բաղայանի Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918 թվականին, Եր., ԵՊՀ հրատ., 1962, աշխատության 205-206 էջերում (փաստ. N 30):

Վրացական «Բորբա» թերթի հաղորդումը Վրաստանի սահմանները որոշող հանձնաժողովի մասին՝ արտատպված «Հորիզոն» թերթում

11 հունիսի 1918 թ.²⁰

Վրացական Հանրապետության կառավարությունը մի հանձնաժողով է կազմել

պետության սահմանները որոշելու համար: Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝ Իր. Գ. Ծերեթելին, Գ. Ե. Օնիաշվիլին, Ե. Ս. Թակաշվիլին: Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար, իբրև իրագեկ անձեր, հրավիրված են Պ. Ինգորովան և Ա. Միլվանին:

[1918թ.] հունիսի 11-ին հանձնաժողովը լսեց Ինգորովայի զեկուցումը, որի գլխավոր եզրակացությունները հետևյալներն են՝ Վրաստանը պետություն դառնալու համար պետք է պարփակված լինի տնտեսական և ռազմագիտական տեսակետներով հարմար սահմանների մեջ: Արևելյան Վրաստանի միակ բնական սահմանները՝ արևելյան և հարավային կողմերից, հետևյալներն են. հարավից սահմանը ձգվում է Փոքր Կովկասի լեռնաշղթայով, անցնում է Բորչալուի գավառի հարավային սահմանի մոտով՝ Ղարաքիլիսայից հարավ, հասնում է մինչև Սևանա լճի հյուսիսային ափը, դառնում է դեպի հյուսիս՝ Աղստև գետով, հասնում է մինչև Ձեզամ²¹ կայարանը, ընդգրկում է Զաքաթալայի շրջանը և վերջանում է Սիլարաթ սարով: Զեկուցողն ապացուցում է, որ պատմության ամբողջ ընթացքում նկատելի է Վրաստանի ձգտումը դեպի հենց այդ սահմանները: Այդ սահմաններից դուրս ոչ մի պաշտպանություն չկա՝ մինչև Սուրամի լեռնաշղթան: Ազգագրական սահմանները զեկուցողը վճռականապես մերժում է՝ իբրև պետականության կարիքներին չհամապատասխանող:

Վրացական հանձնաժողովը կարծիքների փոխանակության համար հրավիրել էր Հայոց ազգային խորհրդի և Ադրբեջանի ներկայացուցիչներին: Հայոց ազգային խորհրդի կողմից եկել էին Գ. Հ. Խատիսյանը, գեն[երալ] [Գ.] Կորգանյանը և [Խ.] Կարձիկյանը: Լսելով վրացական հանձնաժողովի նկատառումները՝ Հայաստանի ներկայացուցիչներն իրենց հերթին դրեցին Հայաստանի պահանջները. նրանք պահանջում են այն [սահմանային] գիծը, որի վերաբերյալ արդեն համաձայնել են բոլոր երեք ազգությունները առաջ, երբ խոսք կար

ՎԱԿՆՈՅԻՊԻ

Գ (ժ) քառի, թիվ 4 (40) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2012

ՎԻՄ համահայկական հանդես

18 Այսինքն՝ Բաթումում:
19 Այսինքն՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի:
20 Թվագրվում է համաձայն հրատարակման բովանդակության:
21 Երկաթուղային կայարան Թիֆլիս-Բաբու երկաթգծի վրա:

վարչական սահմանաբաժանման մասին²², այսինքն՝ Բորչալուի գավառի 2/3 մասը պիտի մտնի Հայաստանի սահմանների մեջ, բայց Բորչալուի գավառի 1/3 մասի փոխարեն, որը թաթարաբնակ է, Ադրբեջանին պիտի զիջվի Սղնախի գավառի մեծ մասը:

Կարծիքների փոխանակությունն առայժմ սրանով էլ վերջացավ:

«Հորիզոն», 18 հունիսի 1918 թ., N 117:

N 5

Լրագրային հաղորդում Վրաստանի կառավարության կողմից երկրի սահմանների հայտարարման մասին

12 հունիսի 1918 թ.²³

Վրացական կառավարությունը գերմանական զինվորական միսսիայի պետին հայտնել է, որ ինքը կարգադրել է գրավել անդրկովկասյան երկաթուղու Բագվի գծի տերիտորիան՝ մինչև Փոլի կայարանի կամուրջը Կուր գետի վրա և, Ալեքսանդրապոլի ուղղությամբ, մինչև Ղարաքիլիսայի և Շահալիի միջև եղած թունելը, թեև Վրացական թագավորության սահմաններն արևելյան կողմից, համաձայն Ռուսաստանի և Վրաստանի միջև 1783 թ. կնքված պայմանագրի, համարվում է հիշյալ կետերից այն կողմը:

«Հորիզոն», 13 հունիսի 1918 թ., N 114, «Մշակ», 13 հունիսի 1918 թ., N 111:

N 6

Հայոց ազգային խորհրդի գրությունը Վրաց ազգային խորհրդին

13 հունիսի 1918 թ.

Համաձայն ձեր Խորհրդի նախագահ Ն. Ն. Ժորդանիայի, վրացական կառավարության նախագահ Ն. Վ. Ռամիշվիլու միջև՝ մի կողմից և Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանի ու հայկական կառավարության անդամներ Ա. Ի. Խատիսովի և Ռ. Ի.

Քաջագնունու միջև՝ մյուս կողմից, տեղի ունեցած բանակցությունների՝ Հայոց ազգային խորհուրդը բանակցությունների համար լիազորներ էր ընտրել՝ Վրաստանի և Հայաստանի միջև համապատասխան սահմաններ հաստատելու համար, ընդ որում, համաձայն այդ նույն բանակցությունների, համաձայնության հիմքում դնելով էթնիկական սկզբունքով Բորչալուի գավառի բաժանումը: Այնինչ, երբ մեր լիազորները ներկայացան ձեր լիազոր Ի. Գ. Ծերեթելու հրավերով, վերջինս ձեր Խորհրդի անունից հայտարարեց, որ Վրաստանի կազմի մեջ են մտնում ոչ միայն ամբողջ Բորչալուի, այլև Ղազախի գավառները և Ալեքսանդրապոլի <գավառի> մի մասը՝ այդ պատճառաբանելով նրանով, որ հայաբնակ տարածքները Վրաստանի կազմի մեջ մտնելը թելադրվում է ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի շահերից:

Բանակցությունների անցկացումը հնարավոր համարելով և միայն մեր փոխադարձ համաձայնություններով հաստատված իրական տարաբնակեցումը հիմք ընդունելով՝ Հայոց ազգային խորհուրդը խնդրում է տեղեկացնել, թե ցանկանում եք բանակցություններ վարել վերոնշյալ անձանց կողմից նախնական խորհրդակցությունում միաձայն ընդունված սկզբունքներով:

Խորհրդի նախագահ
Անդամ-քարտուղար

**ՀԱՅ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 15 և շրջ.:
Թողոն: Մեքենագիր: Թարգմանություն
ուսերենից:**

N 7

Քաղվածք Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրությունից

15 հունիսի 1918 թ.

<...> II. Սահմանների խնդիրը:

Ձեկուցում է Խ. Կարճիկյանը. Ես և Գ. Խատիսյանը [Հայոց ազգային] խորհրդի լիազորությամբ [վրացիների հետ] սկսեցինք

22 Խոսքը 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում վարչական վերաբաժանում կատարելու շուրջ ընթացող քննարկումների մասին է:
23 Թվագրվում է համաձայն հրապարակման բովանդակության:

բանակցություններն այն դեպքից հետո, երբ [Ն.] ժողդանիան, [Ի.] Ծերեթելին և այլք ասել էին մեր նախագահին²⁴, թե իրենց տեսակետը սահմանափոխման նկատմամբ ազգագրական է: Գրանից հետո սկսվեց մեր խոսակցությունը: Թուրքերն էլ ցանկացան մասնակցել: Նշանակվեց խորհրդակցություն, որին մեզանից մասնակցում էր նաև գեն[երալ] [Գ.] Կորգանովը, վրացիներից՝ 4 հոգի: Թուրքերը չեկան, որովհետև պաշտոնական հրավեր չկար, այդ պատճառով մեր խորհրդակցությունը ոչ պաշտոնական բնույթ ստացավ: Վրացիները մեզ ցույց տվին մի քարտեզ, որտեղից հանված էր Ախալցխան, Ախալքալաքի մի մասը. մտնում էր նրա մեջ Լոռին, Փամբակը՝ Ղարաքիլիսայից 5 վերստ այս կողմ, Ղազախն ամբողջ, Սևանա ծովի հյուսիսային մասը, Գանձակից 25 վերստ այս կողմ: [Ի.] Ծերեթելին բացատրեց. 1) Պատմական տեսակետը արդյունք է տնտեսական, ռազմական նկատառումների, առանց որի չի կարող գոյություն ունենալ որևէ պետություն: Տարբեր ազգությունների ներկայությունը մի պետության մեջ չի խանգարում այդ տեսակետին: 2) Եթե հիմա ազգագրական սկզբունքն ընդունեն, չեն կարող պաշտպանվել թուրքերի պահանջներից՝ Զաքաթալայի և այն մասերի նկատմամբ, որը սահմանը կնոտեցնի Թիֆլիսին. մի բան, որն անհնարին կդարձնե նրա պաշտպանությունը: 3) Այս դրությունը նպաստավոր է նաև հայերին, որովհետև հայտնի չէ հայկական գավառների վիճակը: Թերևս դրանով ապահովվի մնացած հայերի դրությունը: Համարելով այդ կարծիքը պաշտոնական՝ ավելորդ համարեցի բացատրել [Հայոց] ազգային խորհրդի տեսակետը, քանի որ [Ն.] ժողդանիան և այլք դեմ չեն եղել մեր ցանկություններին: [Ի.] Ծերեթելին ասեց, որ այս վերջնական չէ և չեն պնդում. միայն կարևոր է նաև թուրքերի մասնակցությունը: Հետևյալ անգամ դարձյալ թուրքերը չեկան, որովհետև պաշտոնապես հրավիրված չէին: Չկայացավ և հարցը մնաց անկախ. բայց այս

24 Այսինքն՝ Ա. Ահարոնյանին:

25 Այդ շրջանում Հայոց ազգային խորհրդի ժամանակավոր նախագահը Խաչատուր Կարճիկյանն էր:

26 Խոսքը Վրաստանի կառավարության կողմից երկրի սահմանների վերաբերյալ արված հայտարարության մասին է:

27 Խ. Կարճիկյանը նկատի ունի վրացիների հետ հայտնի հանդիպումը և սահմանային հարցերի շուրջ խոսակցությունը, ինչի մասին նա գեկուցել էր Խորհրդի 1918 թ. հունիսի 15-ի նիստում:

28 Հավակնություններ:

անգամ, ինքը, իբրև դաշնակցական և [Խ.] Կարճիկյան, խիստ խոսեց [Ի.] Ծերեթելու և ընկ[երների] քաղաքականության առթիվ: Նրանք շատ հուզվել էին, որ հայերը պնդում են և չեն հրաժարվում [իրենց պահանջներից]: Պաշտոնապես այդ հարցը չլուծվեց և հետևյալ առավոտ լույս տեսավ Վրաց կառավարության ակտը սահմանների մասին:

ՀԱՄ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 255
 շրջ.-256: Պատճեն: Մեքենագիր:

N 8

Քաղվածք Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրությունից

16 հունիսի 1918 թ.

<...> III. [Լսեցին]. Բողոք Վրաստանի կառավարությանը սահմանների մասին.

[Նախագահը²⁵] կարդում է [Հայոց ազգային] խորհրդի գրությունը՝ ուղղված Վրաց [ազգային] խորհրդին: Առաջարկում է ձևական բողոք ուղղել [Վրաստանի] կառավարությանը, քանի որ նրանց հրապարակած ակտից²⁶ առաջ էր եղել Խորհրդի գրությունը:

Մ. Պապ[աջանյան]. Համաձայնելով, որ բողոքն անհրաժեշտ է, բայց պետք է նախքան այդ մի անգամ էլ փորձ անել տեսնվելու նրանց հետ և պարզելու նրանց տեսակետը:

Խ. Կարճիկյան. Արդեն անցյալ անգամ հայտնեց, որ ինքը խոսակցություն է ունեցել և պարզվել է հարցը²⁷: Անհրաժեշտ է ձևական բողոք [հայտնել]:

Ս. Հարությունյան]. Առաջարկում է ոչ միայն բողոքել, այլ նաև մեր կողմից ցույց տալ նաև մեր սահմանները, որի մեջ մտնում են [նաև] այն գավառները, որոնց նկատմամբ նրանք պրիտենզիաներ²⁸ ունեն:

Ս. Մամիկոնյան. Բավական է համարում Խորհրդի գրությունը: Այլևս բողոք հարկավոր չէ: Միայն մամուլին հայտարարել, որ նրանք մտնում են իրենց նախկին տեսակետին:

Հ. Ազադյան. [Առաջարկում է] բողոքել և դեմոկրատական սկզբունքի հիման վրա

ՎԱԿԵՆԻՍԵՆ

Գ (Ճ) քաղի, թիվ 4 (40) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2012

ՎԻՄ համահայկական հանդես

պահանջել, որ նոր կոմիսիա²⁹ կազմվի, [որպեսզի] այդ խնդիրը³⁰ լուծվի:

[Ա.] *Բարայան*. Մեր կողմից հայտարարել, որ մեր սահմանն էլ այս է, թող նրանք բողոքեն ու ...³¹

Ս. *Պապազանյան*. [Առաջարկում է] չխճճել գործը և կիսապաշտոնական ձևով բողոքել և դեմոկրատական սկզբունքով պաշտպանել մեր հին տեսակետը՝ առանց կոմիսիաների պահանջի:

Ընդունվում է ժողովի կողմից, որ անհրաժեշտ է որևէ վերաբերմունք ցույց տալ:

[Որոշեցին. կայացված] որոշումը դեմոկրատական սկզբունքներով պատճառաբանել և մանուկի միջոցով միայն հայտնել ի գիտություն՝ առանց <Վրաստանի> կառավարությանը ձևական բողոք հայտնելու:

**ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 39
շրջ.-40: Բնագիր: Ձեռագիր:**

N 9

**Հայոց ազգային խորհրդի
հայտարարությունը Վրաստանի
կառավարության կողմից երկրի
սահմանների հայտարարման առթիվ**

16 հունիսի 1918 թ.³²

Հայոց ազգային խորհուրդը, տեղեկանալով Վրաստանի կառավարության դեկլարացիայի մասին³³, որ երևացել է թերթերում մանուկի բյուրոյի միջոցով, որն իր գործերին հրահանգում է գրավել Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղու մի մասը՝ մինչև Շահալի և Ղարաբիլիսայի միջև գտնված թունելը և, մատնացույց անելով 1873 թ.* Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված դաշնագիրը, ըստ որի վերջինիս պատմական սահմանները համարվում են ավելի հեռուն, կարծում է. 1) Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև սահմանների խնդրի վերաբերյալ դեռևս համաձայնություն

չի կայացել հարևան պետությունների հետ: Վրաստանի կառավարության միակողմանի որոշմամբ սահմանների հարցը վճռվել չի կարող, քանի որ այդ բանը որոշվելու է Վրաստանի և Հայաստանի միջև կայացած համաձայնությամբ և դաշնագրով: 2) Իր էությամբ վրացական կառավարության այդ որոշումը հակասում է դեմոկրատական սկզբունքներին, որի հիմքը ծառայում է ժողովուրդների ինքնորոշումը և էթնիկական³⁴ սկզբունքը, որով և ղեկավարվում էր մինչև օրս կովկասյան դեմոկրատիան:

Հայոց ազգային խորհուրդ

«Հորիզոն», 19 հունիսի 1918թ., N 118:

N 10

**«Լոռու և Ղազախ-Շամշադինի
հայրենակցական միությունների
բանաձևը» Վրաստանի տարածքային
նկրտումների վերաբերյալ**

16 հունիսի 1918 թ.

Ի նկատի ունենալով վերջերս տեղական մանուկի մեջ երևեցած Վրաց կառավարության պաշտոնական հայտարարությունը և, լսելով այդ առթիվ գեկուցումներ, ըստ որոնց Վրաց Դեմոկրատիկ Հանրապետությունը որոշել է յուր սահմաններին կցել Լոռու և Ղազախ-Շամշադինի հայաբնակ շրջանները՝ առանց այդ վայրերի ազգաբնակչության կամքը և ցանկությունները հարցնելու կատարվելիք սահմանակցման վերաբերմամբ,

Նկատի առնելով այն մեծ սկզբունքները և նշանաբանները, որ հանդես հանեց Ռուսական մեծ հեղափոխությունը³⁵ ի դեմս հեղափոխական պրոլետարիատի՝ մասնավորապես և հեղափոխական դեմոկրատիայի՝ ընդհանրապես, որոնց նշանավոր ռահվիրաների ձեռքում է գտնվում այժմ հանգամանքների բերումով Վրաց Դեմոկրատիկ

29 Հանձնաժողով:

30 Այսինքն՝ հայ-վրացական սահմանավեճը:

31 Բնագրում բացթողում է:

32 Ժամանակը ցույց է տրվում ըստ Հայոց ազգային խորհրդի նիստում հայտարարության վերաբերյալ որոշում ընդունելու օրվա:

33 Տե՛ս N 5 փաստաթուղթը:

* Պարզ վրիպակ է՝ 1873-ի փոխարեն պետք է լինի 1783:

34 Ազգագրական:

35 Խոսքը 1917 թ. Փետրվարյան հեղափոխության մասին է:

Հանրապետության ղեկը³⁶ և նրան համապատասխան ընթացք տալը,

Նկատի ունենալով վերոհիշյալ նշանաբաններից անմիջապես բխող և Ռուսական մեծ հեղափոխության զանազան ելևէջներում սրբագործված ազգերի և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքներն ու իրավունքները,

Նկատի ունենալով հայ ժողովրդի պատմական, ազգագրական և կուլտուրական պայմանները, որոնք անկապտելիորեն վերապահում են հիշյալ գավառներին իրենց բացառապես հայ ազգաբնակչությամբ, ուր չկա մի անհատ իսկ վրացի բնակիչ, նույնիսկ վերաբնակյալ՝ միանալու իրենց ցեղակից և պատմական իրավունքներով ու ավանդություններով կատարելապես համանման Հայկական Հանրապետությանը,

Նկատելով, վերջապես, այն հսկայական զրկանքներն ու վնասները, որ կրեց հայ ժողովուրդը այս աշխարհաստան պատերազմի ընթացքում թե՛ Ռուսաստանի և թե՛ Թուրքիայի մեջ, որոնցից հետո գեթ չնչին առիթ է ներկայանալու այդ ժողովրդին միանալու, ինքնամփոփվելու և միատարր կյանք հաստատելու արդեն առանց այն էլ չափազանց սեղմ և անձուկ աշխարհագրական սահմաններում, այնինչ Լոռու և Ղազախ-Շամշադինի շրջաններից զրկվելը տնտեսական ծանր հարված կլիներ այդ ժողովրդի սրտին և ոտնահարում նրա էական իրավունքների, Լոռու և Ղազախ-Շամշադինի հայրենակցական միությունների ընդհանուր ժողովը [1918 թ.] հունիսի 16-ին կայացրած հավաքություն որոշեց, բողոքելով Վրաց կառավարության ձգտումների դեմ, կտրուկ և շեշտակի պահանջ դնել [Հայոց] ազգային խորհրդի առջև, որ նա սույն նկատառումներով ամեն կարելի միջոցներ գործ դնի՝ դիմում անելու վրացական կառավարությանը և հարկ եղած դեպքում գերմանական ներկայացուցչությանը՝ Լոռու և Ղազախ-Շամշադինի զուտ հայաբնակ շրջանները կցելու Հայկական Հանրապետությանը՝ սպառելով այդ նպա-

տակին հասնելու համար բոլոր բարոյական և դիվանագիտական հնարները: Սույն բանաձևը ուղարկել նաև վրաց ս[ոցիալ]-դեմոկրատիայի պատասխանատու մարմինն և նույնն իբրև կոչ ուղղել մամուլի մեջ³⁷:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 1 գ. 4, թ. 1 և 2րջ.:

Պատճեն: Մեքենագիր:

Հայտարարության կիսապ ցարքերակը (հայերեն մեքենագիր) փնտ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 108:

N 11

Լոռու և Ղազախ-Շամշադինի հայրենակցական միությունների ընդհանուր ժողովի դիմումը Հայոց ազգային խորհրդին

26 հունիսի 1918 թ.

թ. Թիֆլիս

Ներկայացնելով ընդ սմին ամսիս (իմս 1918 թ. հունիսի - Հ. Ս.) 16-ին կայացած Լոռու և Ղազախ-Շամշադինի հայրենակցական միությունների ընդհանուր ժողովում ընդունված բանաձևն³⁸ այդ երկրները Վրացական Հանրապետությանը միացնելու մասին՝ Լոռու և Ղազախ-Շամշադինի հայրենակցական միությունների վարչությունները խնդրում են Խորհրդիդ՝ դիմել ամենակտրուկ միջոցների այդ առթիվ և [հայրենակցական միությունների] վարչություններին իրագեկ պահել այդ խնդրի վերաբերյալ արված քայլերին:

[Ժողովի] նախագահ՝ Հ. Արդրության
Քարտուղար՝ Գ. Սահակյան

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 109: Բնագիր:
Մեքենագիր:

36 Խոսքը Ն. Չխեիճեի, Ի. Ծերեթելու, Ա. Չխենկելու մասին է, որոնք 1917 թ. կարևոր դերակատարություն ունեին հետփետրվարյան Ռուսաստանում:

37 Բանաձևը հրատարակված է՝ «Մշակ», 22 հունիսի 1918 թ., N 118, «Աշխատավոր», 29 հունիսի 1918 թ., N 72: 38 Տե՛ս N 10 փաստաթուղթը:

**Լրագրային հաղորդում Երևան
ճանապարհվելիս ՀՀ ղեկավարների
նկատմամբ վրացիների հարուցած
խոչընդոտների մասին**

17 հուլիսի 1918 թ.³⁹

[Հայոց] ազգային խորհուրդը, ինչպես հայտնի է, միանգամայն անպատվաբեր պայմաններում ամսիս (իմա՝ 1918 թ. հուլիսի – Հ. Ս.) 17-ին Թիֆլիսից մեկնեց ղեկի Երևան: Իր հարևան ժողովրդի գերագույն մարմնի տեղափոխության առիթով Վրացական Հանրապետության կառավարությունը հարուցել էր մի շարք տգեղ ու ստորարժեք արգելքներ, որոնց մասին գրելն անգամ թե՛ զգվանք ու թե՛ խորը ցավ է պատճառում: Հայտնի է և այն, որ Վրացական Հանրապետության կառավարությունը զլացել էր անգամ իր ներկայացուցիչն ունենալ կայարանում, չնայած որ Ազգային խորհրդի մեկնման մասին նա ստույգ կանխօրեն գիտեր: Այսօր իմանում ենք մենք, որ, հասնելով վրացական սահմանը՝ Փոլի, պարզվում է, որ երկաթուղու և սահմանապահ պահակները ոչ մի տեղեկություն չեն ունեցել այն մասին, թե Երևան է գնում մեր ժողովրդի գերագույն մարմինը, պատրաստվել են գնացքը խուզարկել ու նորից մի շարք նոր արգելքներ հարուցել: Չմոռանանք շեշտել, որ վրացական իշխանությունը խոստացել էր նախապես համապատասխան կարգադրություններ «անել»՝ Ազգային խորհրդի ուղևորությունը «դյուրացնելու» ցանկությամբ:

Շնորհիվ գերմանական սպայի ներկայության միայն՝ հայ ժողովրդի ընտրյալներն անփորձ կարողանում են սահմանն անցնել:

Բոլորովին տարբեր պատկեր էր Ադրբեջանում:

Սահմանում հանդիպեցին գավառապետը և կոմենդանտը:

Երկու օր նահանգապետն ու գինվորական իշխանության պետը կայարանում սպասել էին մեզ ու հետ գնացել՝ մեր տեղ հասնելու ժամանակը ճիշտ չիմանալու պատճառով:

³⁹ Թվագրվում է՝ համաձայն հրապարակման բովանդակության:
⁴⁰ Ադրբեջանական:

Կայարանում դիմավորեց մեզ շրջակա գյուղերի թուրքական⁴⁰ ազգաբնակչությունը նվազակցությամբ:

Ղազախում իշխանությունը պատրաստել էր գիշերելու օթևան և ընթրիք: Բայց Ազգային խորհուրդը դժվարացավ ուշ լինելու պատճառով գնալ քաղաք, այլ մնաց գնացքում գիշերելու՝ առավոտյան ճանապարհ ընկնելու համար:

Պետք է ասել, առհասարակ, որ թուրքերը և տաճկական իշխանությունները շատ սիրալիր էին և քաղաքավարի՝ հակառակ այն ուղղակի թշնամական վերաբերմունքի, որ նկատվում էր Թիֆլիսում Ազգային խորհրդի վերաբերմամբ՝ սկսած ամենափոքր խնդիրներից:

«Հորիզոն», 23 հուլիսի 1918 թ., N 144, «Աշխատավոր», 24 հուլիսի 1918 թ., N 90: